ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5
«ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-26-10/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԳՆՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

21.01.2026թ.
Ժամը 15^{00}

Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-26-10/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացումն իրականացվել է 19-ը հունվարի 2026թ. ժամը 11^{00}-ին՝ Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով: Հանձնաժողովը մասնակցի կողմից ներկայացված հայտն ուսումնասիրելուց հետո շարունակեց աշխատանքը:

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու(ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԿԾԲ պետ Վ. Ղազարյանը,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԶԲՖԿԾ պետ Ա. Պապյանը,

ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԿԾԲ գլխավոր մասնագետ Հ. Ավանեսյանը:

Գնումները համակարգող՝
ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության ԳԿ 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ Լ. Թազայանը:

«ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-26-10/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Լ. Թազայան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակցի մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-26-10/1» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկի հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-26-10/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակցի մասին.

(Լ. Թազայան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «Էլեկտրականության բաշխման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-26-10/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Մասնակցի անվանումը
1.	«Էներջի Պրովայդեր» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-26-10/1» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

(Լ. Թազայան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի.

2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են.

2.3 Մասնակցի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-26-10/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Լ. Թազայան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Գնման առարկա	Չ/մ	Քանակը	1 կՎտժ-ի նախահաշվային գումարը (ՀՀ դրամ) ներառյալ ԱԱՀ	Ընթացակարգին մասնակցող ընկերությունների				
					Հ/հ	Անվանումը	Գնային առաջարկ /ՀՀ դրամ/		
							Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	էլեկտրականության բաշխման ծառայություն	դրամ	1	32,4	1	«Էներջի Պրովայդեր» ՍՊԸ	26.75	5.35	32.1

Սույն հրավերով սահմանված ծառայությունների մատուցման գնման առավելագույն գինը կազմում է 871,883,850 ՀՀ դրամ:

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են):

3.3 Ըստ ներկայացված տվյալների՝ Մասնակիցը հանդիսանում է ԱԱՀ վճարող:

3.4 Գների նվազեցման նպատակով բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկի հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-26-10/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Լ. Թազայան)

4.1 21.01.2026թ.-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, Armeps (www.armeps.am) համակարգում էլեկտրոնային գնահատման արդյունքում, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկի հիման վրա «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-26-10/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված «Էներջի Պրովայդեր» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-26-10/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-26-10/1»» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

4.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-26-10/1» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին՝ «Էներջի Պրովայդեր» ՍՊԸ-ին, պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Սույն ընթացակարգի շրջանակներում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ չի կիրառվել, քանի որ հայտ ներկայացրած մասնակիցը միակն էր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

(Լ. Թազայան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-26-10/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Լ. Թազայան)

6.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Վ. Ղազարյան
Գնահատող	Ա. Պապյան
Գնահատող	Հ. Ավանեսյան
Գնումները համակարգող՝	Լ. Թազայան